56. ՋԱՆ-ՓՈԼԱՏ

Կէլնի, կէլնի, կէլնի, չէլնի, կէլնի, կէլնի* մեյ թագավոր: Էսա թագավորն ունի իրեյք խատ խուրն-խրեալեն աղջիկ: Աղջկներաց որն որ տիսնաս՝ չուտես չխմես՝ ինոր իրեսն վեր իրիշկաս. աղջիկ մի՛ ասե. ջեյրան, սարի մարալ ասա:

Թագավորը մեկ օր խեստ ուր վեզիրներաց կէլնի տյուս, վազիր-վյուզիրներով կխեծնեն խրեղեն ձիանք, կէրթան կանգյալ. իրիկուն որ մութ կէլնի՝ կուգյան տուն: Ինոր լալեն կուգյա մոտ, գլուխ կուտա ու կասի. «Թագավոր ապրած կենա, կասեն որ մեյ խատ Ջան-փոլատ կա մեր երկրիս դեն. ինչ կանդար գոռպա թագավոր էլնի՝ կսպանի, ինոր մալ ու մյուլք, քյոշկ ու սարեն զըմեն կառնի, զապթ կանի, տնով-տեղով կջնջի:

Թագավոր էսա կարա-խարար որ կլսի՝ ախն ուր կպռնի, մալուլ-մռութ կինի կամ-կասաֆաթի մեջ, քիյթ ու մռութ կկախի, կնստի ուր էօղեն:

Ինոր ճոչ աղջիկ իգին կառնի, կուգա մոտ. կասի. - Թագավոր ապրած կենաս, էսօր ի՞նչ էլե քե, ինչի՞ ըսըսկընա մալուլ-մռութ ես, քյո կամ-կասաֆաթն ինչի՞ց պիտի էլնի:

Կասի. - Ա՛յ աղջիկ, կասեն որ մեյ խատ Ջան-փոլատ ի փեյտա էլե, ինչ կանդար զոռպա թագավոր էլնի՝ կսպանի, ինոր մալ-մյուլք, տունը-տեղը զըմեն զապթ կանի:

- Թու՜, - կասի աղջիկ, - էն ի՞նչ կանեմ. ես էլ գիտի որ թե ձիկ ուզող էր իկե, ինոր խամսար իր ինկե հոգսի մեջ:

Էն կէրթա. կուգա թագավորի միջնեկ աղջիկ, էն էլ ըսկուն կըխառցուցի խոր. ինոր էլ ըսկուն կասի:

- Թու՜, ես գիտի թե իմ տատին ուզող էր իկե. ի՞նչ կանեմ Ջան-փոլատ. խորեմ ուր գյլոխ:

Կասի, էն էլ ճոչ քրոջ պես կանի ուր կէրթա: Կմնա էն մեկել օր. կուգյա թագավորու պզտիկ աղջիկ:

---

* Հեքիաթների նախաբանը այսպես է սկսվում· Կրկնում են երկար, մինչև շունչը հատնում է (Օ. Բ.)

Պզտիկ աղջիկն ի, որ կլսի ու կտիսնա ուր խոր տրտմութեն, էլ չխամբերե. իզին կառնի, կմտնի թագավուրու մոտ, կասի. - Թագավոր ապրած կենա. քե ի՞նչ էլե, ինչի՞ ըսըսկընա մալուլ-մռութ կամ-կասաֆաթի մեջ ես:

Թագավոր կասի. - Գնա դեն. քեզնիչ ճոչերիչ ի՞նչ խասկցա, մնաց որ տյու ինոնց պզտիկն ես, ի՞նչ պիտի խասկնամ:

Աղջիկը շատ կինի խետ, խոր ոտն ու ձեռ կինի կխամբուրի, շա՛տ երկար-բարակ խարց-վորձ կանի, որ չարա չէլնե՝ վերջ ընքյուռ-ընքյուռ կուլա, կաղավըդի խորն: Թագավուրու դիժարը կուգյա, էն էլ կասի ինոր. - Կասեն որ մեկ Ջան-փոլատ ի տյուս իկե, կսպանի զըմեն կտրիճ թագավորներ, տնով-տեղով կջնջի, ինոնց մալ-մյուլք կխլի, զապթ կանի, մարդ, աղամորդի ճար-չարա չկանա անի հետ ինոր. ուր ջանն է երկթե, խոգյին պողպատե:

Պզտիկ աղջիկն ի որ կլսի՝ սիրտ կուտա խորն, կասի. - Խերին, խերին, իմ թագավոր խերիկ, տյու կասաֆաթ մի անե: Աստուած ողորմած ի, ես կէրթամ, կսպանեմ ինոր, ճոչ պրտուճն ականջ կթողնեմ, աշխարհ կազատեմ:

- Ի՞նչխ որ կաղատես. տյու վո՞վ, էն վով, տյու դյո՞ր, էն դյոր. կուզես որ շո՞տ մեռնես, - կասի թագավոր:

- Ես ինոր կսպանեմ, ը՛տյու տեղդ ծանդր կաց:

Աղջիկն ի, առավոտանց շոտ թալալ կուտա կանչել. «Թագավուրու հրամանն ի, ինչ կանդար որ խորոտ աղջիկ կա էսա քյաղաքյ՝ բյությունն էլ թող գյան, ժողվեն թագավուրու խաս-բաղջեն. չէկողի մախը մախ ի»:

Առավոտուն ինչ կանդար որ խորոտ, զարուն-զարդարուն գյուլնուզ աղջիկ կեր՝ զըմենն էլ ժողվան էկան խաս-բաղջեն: Կզանեն, կխաղան, գյոնդ կբռնեն, կթռնեն, կթռվռան չյում թագավուրու աղջիկն էլ կգարուի, կզարդարվի, խետ ուր խալաեղներաց կուգյա կմտնի ինոնց մեջ: Ինոնց մեջեն կջոկի կջոկջկի եռսուն խատ հմենիչ խորոտներ. ինն էլ ինոնցիչ խուրն-խրեղեններ կջոկի. մեկն էլ ինքն ի, կէլնի ինոնց խետ. թամամ կէլնեն քյառսուն խատ: Մեկել մնացած աղջկներուց իզին կուտա որ էրթան:

Ամր կանի, բերել կուտա քյառսուն ձեռք լաճու խալուվ, սաթրա-փանթոլ. քյառսուն խատ շմշիր թուր, քյառսուն խատ պողպտե կպխան, քյառսուն կամա, քյառսուն ջուխտ նալչալու ջզմա, հմեն բանիչ քյառսունանկան ձեռք. որ թամամ էլավ՝ խագյուց հմեն աղջկանցն էլ: Էն մեկել առավոտուն հազրվան, կանչիցին աստվածն, գնացին: Շատ գնացին թե քիչ՝ էն էլ աստվածն ի խաբար:

Թագավորը ինոնց իտն՝ կէլնի ուր կըլըդ-կիյաֆաթ կտոխի, կէրթա կխասնի աղջկանց. կուզի որ ինոնց խետ էրթա, տիսնա թե ի՞նչխ պիտի սպանեն Ջան-փոլատին. ազատի ուր աղջիկն: Ամմա աղջիկը որ կտեսնա՝ չիմնա թե ուր խերն ի. հասան քամ կանի ուր աղջիկ-ասքրներ,

կքշի վեր խոր. կանի որ սպանի՝ խերը համան ճանչվորութեն կուտա. կասի. «Դադար կաց, ես քյո թագավոր խերն եմ: Հիմա կխավատամ որ Ջան-փոլատի ջանը տյու կառնես»: Կօրինի ուր աղջկան և ընկերներաց, կաց բարով կանեն մեկ մեկու ու կջոկվեն: Թագավորը կդառնա ուր տուն. աչքը ճամբախ կաչկի:

Աղջիկն ուր ասքյրներով կինեն ճամբախ, կէրթան կէրթան, չյում կխասնեն Ջան-փոլատի հէսիրներաց գեյդ: Հէսիրները ինոնց կխառնցուցեն, կասեն. - Դյուք դյո՞ր կէրթաքյ:

- Կէրթանյք որ ձեր աղեն՝ Ջան-փոլատն սպանենք:

- Թու՜, տյուք չեք կանու վեր ինոր. ինոր ջան պոդպատ ի, վիզն էրկթե, մարդ, ադամորդի ինոր ոժ-ոդջանք չունի. թե խելացի եք՝ մեղք եք, ետ դառցեք ձեր [տուն] ու տեդ:

Աղջիկ կասի. - Կուզի էրկթիս էլնի, կուզի պոդպատիս, ինչիս որ էլնի, ախըր իկեր եմ, որ էրթամ մեկ խատ ինոր խետ զանեմ զարնվեմ, յան ի կսպանվեմ. յան ի կսպանեմ, աշխարհ կազատեմ:

Սեկել օր թագավուրու աղջիկը ուր եռսուն ինն ընկերներն կթողնի էտա տեղ, ինքն մեն-մենակ կխեծնի ձին, կառնի ուր թուր-թվանք. կէրթա, կասի ընկերներաց զմենին. - Քյանի որ նեղ չեմ ինկե՝ աստծով ձե չեմ կանչե. ամա որ նեղ ինկյա, մազս կուտամ կրակ թե չէ՝ էն սահաթին ալալ-ուջալա շոտով խասեյք:

Ձինը ըսկուն սարսափով կքշի, որ ինոր օտներաց տկիս պըլըսթը-պըլըսթը կեծակի պես կրակ կուտա: Կէրթա կխասնի վեր Ջան-փոլատի դռան, կկայնի շիմքյան վրա, թուրը կչլտի, իրեք դան իրեսը դեմ աղոթրան կխաչակնքի, գյայողին մեկ գանելով գեյտին կփոքյվկուցի, կսպանի: Արուն գյոեխը առվի պես կէրթա. ինոր սուր թրիս ազատվողները թափեթափ խանքյակտուր կխասնեն Ջան-փոլատին կարա-խաբար կտանեն: Ջան-փոլատ որ կլսի էսասկնա կտրճութեն՝ սոճին տրին մատը կկծի, կասի. ի՞նչ անեմ, ի՞նչ չանեմ. շատ կմտմտա. «Ախըր էսա ի՞նչ մարդ ի, որ ջասարաթ արե, իկե իմ վերեն. յան շատ կտրիճ ջանավար ի, յան շատ քյոթի-պլնգազ ի»:

Վեր կէլնե ուր տեղիս, կէրթա, գյլոխ դոնիս որ տյուս խանի չխանե՝ աղջիկը յա՜ աստված կասի, թուիը մեյխատ որ կիջուցի Ջան-փոլատի վզակոթին՝ վգի կեսխետեն միսը կկտրի, էրկաթը կմնա:

Աղջիկը կտիսնա որ Ջան-փոլատն ինզավ, փռվավ գեյտին՝ կավատա որ գյո սատկեր ի, ուրախ-ուրախ կէրթա կկանչի ինոր հ'էսիրներաց, մուժդա կուտա, կասի. «Ձեր աչքը լուս էլնի, ձեր տերն սպանի, ջանդակն էլ փռի գեյտին»: Հ'էսիրները զմեն էլ հ'էսիրութնիս կազատի, կճամխի իրենց երկիրներ, կուգյա կառնի իր եռսուն ինն աղջիկ ասքյրներն, առոյք-փառոյք կդառնա ուր խոր տուն:

Խուսբար կէրթա թագավուրուն, էլ ասել, խնդալ, զանել, խաղալ, անհեսապ ուրախութենով կուգյան աղջկան տես: Թագավորն ուր ձիուց ցածր կէջնի, կխասնի աղջկան երեսն էլ, ճակատն էլ կպռնի պռչ-պռչ

կպաքի, կասի. - Աղջի՛կ, իրեսդը սիվտակ. տյու մեր ազատիչն էլար. ծլես ու ծաղկես:

Ջան-փոլատի խելքն իրեյք օր, գիշեր-ցերեկ վերեն չի գյա. խեռըլած կմնա ուր արընի մեջ. կտոր մը որ կայեղանա՝ խելքը կժողովի, խեյքիյմ կպիրի, ուր վիզ ժըրըցուցել կուտա: Կէլնի յոթ բեռ ոսկի, արծաթ, ակնունք, ջավահիր կբառնա ուր ծիանց, կինի ճամբախ, կասի. «Կէրթամ, ուր որ էլնի յոթն աշխարհ կան-գյամ, ինչխ որ էլնի՝ իմ դյուշմանը պիտի գտնեմ»: Իրեյք ամիս երկրե երկիր, աշխրե աշխարհ, ոսկի, արծաթ ցրվելով, խոջելով, իսոր-ինոր խառցուցելով, կֆոֆռա, սալըխ-սուլուխ առնելով՝ կէրթա կիջնի թագավուրու տուն:

Թագավորը չիմնա, թե էն ուր աղջկա դյուշման Ջան-փոլատն ի: Շատ ագաթ, իքրամ, պատիվ կուտա ինոր, շատ էլ կմեծարի. էն ըսկուն գիտի, որ մե զանգիյն բագըրգյան ի: Իրիկուն որ կէլնի՝ թագավուրու ճոչ պզտիկ իշխանները կժողվեն, ամեն մեկը ուր գյլխուն գյացածը կսա կանի, սարիյ-ծորիյ ամեն մեկուն ինչ որ ռաստ իկե՝ ջորկով կպատմեն: Ամենի բերան բաց, աչքներ կտնկեյն թագավուրու բերան, կաչկեն որ կաչկեն, թե թագավորն էլ մի կսա կանի:

Թագավորն ի, ուր խրերուց խաթրի խամսար բերան կբանա, մի շատ էշխով, ուրախ սրտով կպատմի:

- Իշխաննե՛ր, վազիր-վյուզիրնե՛ր, տյուք իմացա՞յք, որ իմ պզտիկ աղջիկ էսա քյանի օրեր ի՛նչ ճոչ կտրճութեն արաց, ժողվեց ուր աղջիկ ասքյրներ, կնաց Ջան-փոլատի վերեն, մեյ դարբով զարկեց Ջան-փոլատն սպանեց, ձիկ էլ ազատեց, ձեզիկ էլ խետ. իմ աչքն էլ լուս, ձերն էլ:

Ջան-փոլատ որ կլսի թագավուրու խաբըրներն՝ մազերն կդիզանան, զահլանքյուշտ կէլնի, ամա ուր կժողվի, բան չի ասե: Վազիրները զըմեն աչքալուսանք կուտան կպոծնեն, սըրեն կուգյա Ջան-փոլատին, որ մոտ կուգյա ու կասի. -Թագավոր ապրած կենա, է՛ն քյո ասած ու պատմած Ջան-փոլատն գյո ես եմ. ադորթ ի, քյո աղջիկը մենակ իմ մսե վիգն ի կտրե, էրկթե վիզս ուր տեղն ի. ամա ես էլ շատ ու շատ զարմացեր եմ ինոր կտրճութենի վերեն, թե էտա ի՞նչ ջասարաթ էր, որ էն իմ սընորն անցավ, էկավ խասավ չյում իմ դուռ: Ես ինոր խաթրին, ընոր սիրուն աշխրե աշխարհ, երկրե երկիր եմ ինկե, անջախ-անջախ կնդեր եմ իմ զոռբեն: Սկա ի՞նչ կասես, թագավոր ապրած կենա, քեյզնիյ խնդիրք ունեմ, որ քյո աղջիկը տաս ծիկ:

Էսա խաբրի վերա, թագավորն ու վազիրները իրանց մատը [կ]կծեն, դել չեն խավատուս, ասրմանք-զարմանք կէլնեն:

Թագավոր որ կտիսնա Ջան-փոլատի մարտութեն, ինոր տված կտրիճ-կտրիճ ջուղաբներ՝ կասի. - Թե ադորթ որ դյու էն կտրիճն ես, իմ աղջկան բաբաթ դոչաղութեն ունես. քեզ կուրբան էլնի իմ աղջիկ:

Յոթն օր յոթ գիշեր դըֆով ու զուռնով խարսնիս կանեն, շատ անթիվ հեծելով, ասքյրներով Ջան-փոլատին ճանապարհ կդնեն, կառնեն աղջիկ

կէրթան իրենց երկիր: Շատ կէրթան թե քիչ, էն աստված գիտի, Ջան-փոլատ ամր կանի, ասքյրներ ետ կդառցուցի: Ճամբախ կծռի. էն ճամբխով կէրթա, որ աղջիկ ալ-բե-ալ կիմնա. ուր մտքում կասի. «Չէլնի՞ թե էսա անիրավ ձիկ տանի զայ անի»: Աղորթ որ Ջան-փոլատի միտքը չար էր, կուզեր մեյ խալվաթ տեղ աղջկան մեռցներ:

Աղջկան կտանի դեն, կբիրի դեն, ծուռ-ծուռ ճամբխներով տրորս կուտա, վերջը կբերի ուր հ'էսիրներաց գեյդ, կտանի աղջկա ծամերը կկախի առքիյց, ճելան-ճելան ջանդակը կէրթա կուգյա, մարդ մատաթ չկա որ ազատի:

Ջան-փոլատն էտա ժամանակ ինչխ կէլնի, կէրթա տյուս, ամր կանի ուր մարդերաց, որ չոր-խռիկ ցախեր բերեն վառեն, սաղ-սաղ իրիցեն աղջկա ջանդակը:

Կաս-կուտրաթ, էտա ժամանակ կխասնի էն տեղ կուգա Չաչալ-բազրգյան, որ Ջան-փոլատի շատ ճոչ դյուշման ի. կտիսնա աղջկա հալ-վիճակ. ձո յաման, ձո մատաթ, հավար կանի, դանակ կբերեն շոտ-շոտ չվան կկտրեն, ինչ հալ-հալբաթով աղջիկը էն կախելա տեղից կազատեն: Չաչալ բազրգյան որ կազատի աղջիկը՝ կդնի մեչ ուր բեռներաց որ առնի տանի, Ջան-փոլատ համան կխասնի վերեն:

- Ա՛յ, բազրգյա՛ն, բազրգյան, էտա ի՞նչ քյոր բանն ի. դյու քյոր աստված կսիրես, մի՛ տանե իմ որս. տու՛ր, տու՛ր, քյոր լեզուն ինչ կանդար ոսկի արծաթ ուզի՝ կուտամ քեյզ:

Չաչալ-բազրգյանը խայինութեն չանե, էրդում, պատոտում կանի, կասի, որ աղջիկը մոտ ձիկ չի:

Ջան-փոլատ, մկա ինքն ուր կկտրտի, փարչալամիշ կանի. դեն կիրիշկի, դես, զատ չի կանա կնդնե. կկորի կէրթա: Չաչալ-բազրգյան էլ, աղջիկ որ ազատեց, ուր մեկ օր խազար էլնի, տարավ ուր քյաղայքը, ուր տուն, խետ ուր աղջկներաց ընկեր արաց. շատ էլ կսիրեր ինոր: Էտա քյաղքի աղջկները շատ հունարվոր են, քրգյխուն ալնխներ կշինեն, կգործեն, կտանեն կթալեն վեր դարգխի դռան շրտին. ընցնող դարձող, ազաբ լաճեր որուն որ խավնին՝ կառնին ալնախն էլ, գործող աղջիկն էլ:

Թագավորու աղջիկն էլ մեյ խատ շատ լավ քրգյխուն ալնախ գործեց, տվեց բազրգյանին որ տարավ թալեց վեր էն շրտին. տիսնվոները զըմեն մաթ մնացին: Ավուր մեկ էլ էտա երկրի թագավուրու լաճը դյուս կէլնի ֆռալու, կուգյա կխասնի դերգխի դռան. կտիսնա որ շրտի վերեն թալեր են մեյ խատ ըսկուն նխշուն ալնախ, որ չուտես չխմես, ինոր բանած ծաղիկները թամաշա անես: Ալնխի գիյնը թե մեկ ոսկի կուզեն՝ էն կուտա երկու, կառնի ալնախ կտանի տուն, ուր մոր նշանց կուտա: Էն մեկել օր թագավուրու տնից մարդեր կուգյան, աղջիկը բազրգյանի տնից առոյք-փառոյք կտանեն թագավուրու լաճուն: Ըսկուն կխավատա, որ ազատեց Ջան-փոլատի ձեռից:

Տյու մի՛ ասե, որ անիրավ Ջան-փոլատը էն օրվնե մուրի-մուրի ընկեր

ի աղջկա իտև, խառս-փորձ կանի. կիմնա որ թագավուրու լաճուն կնիկ ի դարձե. կասա կանի, չաւր արծաթ ոսկի կխառջի, կուզյա որ էլմ էլ ուր չար կամք կատարի, սպանի աղջկան:

Աղջիկը ոտ դյուշմնի չարութեն գիտի. էրկու օր որ կընցնի՝ խնդիր կանի թագավուրու լաճույ, կասի. - Որ տյու ծիկ առիր, շատ աղեկ, ամա ես երես-անկյալ կաղաչեմ, որ իմ էօղի դռները զմեն էրկթե, մանգյանալի անես, ըսկուն որ թե անվարժ մարդ ներս ուզենա մտնի՝ վզովն ընկնի, կտրի, էրկու կտոր անի, թալի դեն:

Թագավուրու լաճը իսոր խաբրին ականջ չանե, ըսկուն գիտի որ խանաք կանի խետ ոտ:

Կընցնի մի քյանի ամիս: Ջան-Փոլատը կուզյա թագավուրու սարի աթրաֆ, կատատորի որ ներս մտնի. արա չկնդնե: Օրմ էլ կէլնի մուսլի գոմեշ, կուզյա վեր իտոնց դռան կկայնի: Աստծու խրամանքյով աղջիկը կիմնա, կասի. «Աստծու սիրուն, էտա գոմեշ չէլնի որ ներս առնեք. էտա իմ խին դյուշմանն ի»: Մարդ ականջ չանե. մենակ թագավուրու տղեն կիմնա, ներս չեն առնե, էտօր ըտըսկնա կընցուցեն:

Էն մեկ օր Ջան-փոլատ կէլնի խրեղեն ծիմ', կուզյա վեր սարի դռան, շատերը զարմայք կմնան իոնր խորոտկութենի վերեն, ներս կառնեն, չեն իմնա իոնր ինչ էլնելը:

Ջան-փոլատ քե տիսնամ. գիշերը տյուս կուզյա ոտ կապած տեղից, մեռլի հող կյանի վեր սարի զըմեն դռներայ, իոնըյք կթմպրտեն կմնան տեղն ու տեղ. ինքը կէրթա ճոչ-էրկեն պղինձը կթալի վեր օճխին, ճյոտ կեոյուցի որ գյա աղջիկ վերցնի տանի թալի մեջ, սաղ-սաղ խաշի:

Ասւ-փուս կմտնի աղջկա էօղից ներս: Աղջիկը կփիսնա ոտ խին դյուշման. կզարզանդի, տեղն ու տեղ կպապանծվի: Ջան-փոլատ շատ քյաղցրութունով կասի իոնր. - Աղջիկ, էլի, էլի, մի՛ վախենա, ես քե բան չեմ ասե. էլի էրթանըք քյո գյլոխ լվանամ, գիտեմ որ շատ կեղտոտվեր ես:

Աղջիկն էլ, ասպված ոտ խետն էր, մոտ օրերը մեյ խատ խուրն-խրեղեն լաճ տղա էր բերեր. տղեն կուլա, մերը կուզի ծիծ տալ. կասի. - Աման Ջան-փոլատ, մի քիչ դադրի, չյում իմ տղին կշտայնեմ, ապա երթանըք, թող քյո խոսքն էլնի:

Ինչ մյուքյուն կանի, ինչ կանդար որ կուլա կաղավըղի՝ իոնր իրիկը ամեննին չզարթնե, մտե մեռելի քյուն. զըմենն էլ իոնր պես: Աղջիկ կփիսնա որ ճար չէլնե, կասի. - Դե աղեկ, որ ըսկուն ի՝ տյու ինկի առաջ, ես ինեմ քյո իտև, էրթանըք ոտ որ կուզես:

Ջան-փոլատ կինի առաջ, աղջիկն իոնր իտև, կէրթան. որ կխասնեն մոտ մանգյանալի դուռը՝ աղջիկն էլ համան տյու ես խաբար, մանգյանեն կօլորի որ չէ՝ Ջան-փոլատի մսե վիզն էլ, էրկթե վիզն էլ մեկեն կկտրվի կթռնի դեն: Ջան-փոլատի ախագիյն ջանդակ կթողնի դռան շիմքան մեջ, կուզյա թագավուրու լաճուն շատ կդնթի, կդնթի, ծեն կուտա, կխանի վեր, կասի. - Մեկ էլի, մեկ վեր կայ, տնավիրի մարդ, տե՛ս, իմ դյուշման ի՞նչ խանեց իմ գլուխն:

Իրիկը խելքամաղ վեր կէլնի, քյնւսգըղեղ կտիսնա որ ի՞նչ, էօդեն մեջ սրնին լոդ կուտա: Կտեսնա Ջան-փոլատի էրկթե վիզն, ինոր ջանդակն, որ թսվալվե մեջ շիմքան, կըզախախորի, լեզուն կպապանձվի, էլ չգիտե ինչ անի. ետ-ետ կքաշվի էօդի մի քյունջ:

- Էլ մի՛ վախենա, - կասի աղջիկ, - էլ ծիկ դյուշման չմնայ: Մկա ես քե կասեմ, որ ես Չին-Մաչինա թագավուրու աղջիկն եմ, էլի դյուս քյաշի քյո բեռզ-բեռզ ծիանք, սիվտակ ջորիք, բարձի մեր բար-բարխանեն, էրթանք իմ խոր-խերանին մեր երկիր:

Թագավուրու լաճն ի, ականջ կանի ուր կնկան, կէլնի ուր խոր ու մոր օրհնութեն կառնի, կհազրվեն, կէրթան աղջկա հերանց երկիր, Չինու թագավուրու մոտ: Նոր թագատան աղջիկը ճանչվորութեն կուտես հորն, կպատմի զըմեն ուր գլխով գյայած զըմեն փորձանքներն: Նորից յոթն օր յոթ գիշեր խարսնիս կանեն, կխնդան, կուրախնան մեկզմեկու վրա. նոր օյին, նոր բարին կուգյա ինոնց վերեն:

Ասպծուց իրեյք խնձոր էճավ. մեկը ասողին, մեկը լսողին, մեկն էլ ականջ ստողին*:

* Սովորաբար ամեն հեքիաթի վերջում կրկնվում է հիշյալ նախադասությունը, որին խիստ բավականությամբ լսում են ունկնդիրք, և դրանով վերջ է դրվում հեքիաթին (Ծ. Բ.):